

լոտին եւ սարկաւագ կը ձեռնադրուի 1722ին, իսկ Վարդապետ՝ 1726ին: Կեսարիոյ առաջնորդ կ'ըլլայ 1730ին. Եպիսկոպոս կը ձեռնադրուի 1734ին Կրետացի Աբրահամ Կաթողիկոսէն եւ օծման ատեն կ'անուանուի Շնորհալի: 1738ին Գաղատիոյ Առաջնորդ կ'ըլլայ: Վենետիկ, Հռոմ կը ճամբորդէ 1742—1752. Վենետիկի մէջ տպարան կը հաստատէ 1752ին, տարի մը ետքը կը գոցէ: Կը թողու Վենետիկը, այլեւայլ ճամբորդութիւններէ եւ նեղութիւններէ ետքը կը վախճանի Լիգուռնայի մէջ՝ 1773 Հոկտմ. 1, Ուրբ. եւ կը թաղուի Եկեղեցւոյ մէջ, — Ըստ Հ. Ղ. Ալիշանի՝ Ղազար Վրդ. Պոնտոսեան վախճանած է Վենետիկի մէջ՝ 1760ին (Տէս Հայ-Վենետ. էջ 343):

Էջ 74, Ծանօթ. 1: — Կաթողիկոսին վրայ խօսելու ատեն յիշեցինք Հերմոնի Վանքին Վարժապետը, Սեւակիր Յովհանէսը, Վիրապեցի Կիրակոս Կաթողիկոսի ատեն: Արժ. Տ. Յովհանէս Աւգ. քահնայ. Մկրեանի քով՝ Հնդկաստանէն զրկուած ձեռագիր մը կայ, իրապէս խառն է մը, զոր քահանայ մը գրած է իրեն համար ասգիէն անգիէն զինքը հետաքրքրող նիւթեր հաւաքելով՝ շատ գէշ ընդօրինակութեամբ մը: Այդ ձեռագրին ճշմ. էջին եւ Բ. սիւնակին վրայ քանի մը տողեր կան Կաթողիկոս Յովհան Վարդապետի մասին, որ Վիրապեցին կաթողիկոսական Եթովէն վար առնողը կամ թէ առնողներուն պարագլուխը եղած է.

— Զկարգ Կաթողիկոսացն Սրբոյ Եթովէն Էջմիածնի, զոր վերստին նորոգեցաւ ութը հարիւր եւ իննսուն ամի թուականիս Հայոց (= 1441). Տէր Կիրակոս ամին:

Սա յետ երկուց ամաց անկաւ յԵթովէն. վասն զի Աթթամարու՝ յեպիսկոպոսէ էր ձեռնա-

1 Լուսանդքին վրայ սա ծանօթութիւնը կայ. — «Աթթամարու միարանքն բանագրեալք էին յառաջին Կաթողիկոսաց՝ վասն անհնազանդութեան»: